

Ավագ Ա. Հարությունյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ\*

Մուտք

**Բանալի բառեր** – Հայոց ցեղասպանություն, Շերիֆ փաշա, Օսմանյան կայսրություն, քրդական կազմակերպություններ, Մեծ Բրիտանիա, Հայկական հարց, Հայաստանի Առաջին Հանրապետություն, Փարիզի խորհրդաժողով, Կ. Սասունի, 1919 թ. հայ-քրդական համաձայնագիր, Պողոս Նուբար, Համո Օհանջանյան, Ավետիս Ահարոնյան, Սևրի պայմանագիր:

Չնայած համերաշխության հաստատման շարունակական փորձերին՝ հայ-քրդական հարաբերություններում մինչ օրս պահպանվում է պատմական խոր արմատներ ունեցող որոշակի անվստահություն, որից դեռևս չեն ձերբազատվել ինչպես հայերը, այնպես էլ քրդերը: Սա բացատրվում է պատմական անցյալի իրողություններով, երբ քրդական ցեղերը գիտակցորեն աջակցում էին օսմանյան Թուրքիայի իշխանություններին և ակտիվորեն մասնակցում Հայոց ցեղասպանության իրականացմանը: Սակայն, նկատի ունենալով անցյալի ողբերգական ու ցավալի էջերը, այսօր խիստ կարևոր է երկու դրկից և ինչ-որ չափով նաև՝ բախտակից ժողովուրդների համերաշխության փորձերի ուսումնասիրությունը, մանավանդ որ անցյալում դրանք շատ հազվադեպ են եղել:

### 1.Քրդերի վիճակը երիտթուրքական հեղաշրջումից հետո

1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը հաջորդած տարիներին քաղաքական հայացքներով ամենևին էլ ոչ միասնական քուրդ ազգային գործիչներն ընդհանուր առմամբ դեռևս կողմ չէին քրդական անկախ պետության ստեղծմանը, սակայն առավել դեմ էին հայերին ինքնավարություն տրա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.02.2015:

մադրելու փորձերին: Բայց նրանց մի մասը կարևորում էր հայերի հետ համագործակցությունը՝ վերջիններիս քաղաքականապես ավելի կազմակերպված լինելու պատճառով:

Մակայն նախապատերազմյան շրջանում գործակցության հաստատման փորձերը բանակցություններից այն կողմ չանցան, որովհետև քրդերը սկզբունքորեն դեմ էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի անկախությանը, այլև նույնիսկ՝ ներքին ինքնավարությանը: Ավելին, քուրդ ղեկավար գործիչներից Աբդուլ Քադերը, Աբդուլ Ռեզակը, Ամին Աալի Բադրխանը, Իսմայիլ աղա Մմկոն կտրականապես դեմ էին նույնիսկ հայկական նահանգներում բարենորոգումների իրականացմանը: Այսինքն, արտաքննապես միայն ձգտելով հայ ղեկավար քաղաքական շրջանակների հետ մերձեցման և գործակցության՝ քրդերն, այնուամենայնիվ, չէին կարողանում ձեռքբազատվել այն նախապաշարումներից, որոնք իշխում էին ոչ միայն ղեկավար տարրի, այլև ժողովրդական ամենալայն զանգվածների մտածելակերպի և գործելակերպի մեջ:

Եվ բնավ ոչ պատահաբար, երիտթուրքերը, հավատարիմ Աբդուլ Համիդ Բ-ի՝ ազգային փոքրամասնությունների շրջանում երկպառակության սերմանման քաղաքականությանը, ոչ միայն աջակցում, այլև նպաստում էին քրդերի նման դիրքորոշմանը: Այդ նպատակով 1914 թ. մարտի 22-ին կայացած Իթթիհատի կենտրոնի արտակարգ նիստը որոշեց նյութական և պաշտոնական տարաբնույթ հովանավորությամբ շահագրգռել քրդերին ու ավելի սերտ կապել իրենց<sup>1</sup>:

1914-1918 թթ. հայ-քրդական հարաբերությունները մթազնվեցին Հայոց ցեղասպանության իրագործման մեջ քրդերի զանգվածային մասնակցությամբ: Այնուամենայնիվ, եղան քուրդ գործիչներ, որոնք խիստ քննադատեցին երիտթուրքերին հայկական ջարդեր կազմակերպելու համար: Նման տեսակետին էր մասնավորապես Շերիֆ փաշան, ըստ որի՝ ջարդերի նպատակը Եվրոպայի աչքին քրդերին վարկաբեկելն էր: Որոշ քուրդ գործիչներ նույնիսկ կապեր հաստատեցին հայերի հետ՝ թուրքական տիրապետության դեմ պայքարելու նպատակով<sup>2</sup>:

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից հետո նախկին թրքահպատակ ժողովուրդները հնարավորություն ստացան ազատագրվել թուրքական բռնապետությունից: Թուրքիայի ներքին խնդիրներից մեկը քրդական հարցն էր, որը սկզբնական շրջանում երկրորդական պլան էր մղվել, սակայն Արևելքում միջազգային հարաբերությունների հետագա սրման և բարդացման պայմաններում այն ավելի կարևորվեց ու օգտագործվեց ծավալապաշտական նպատակների իրականացման նկատառումներով: Նման հետաքրքրության գլխավոր պատճառներից մեկը քրդական տարածքների աշխարհագրական դիրքն ու բնական հարուստ պաշարներն էին:

Առաջին աշխարհամարտից հետո քրդերը, Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում դառնալով գերակշիռ տարրը, այնուամենայնիվ,

1 Տե՛ս **Քայրուրդյան Վ.**, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Եր., 1989, էջ 315-316:

2 Տե՛ս Курдское движение в новое и новейшее время, Москва, 1987, с. 77.

չկարողացան միասնական դիրքորոշման հասնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կողմնորոշումների հարցերում: Այդ ամենին նպաստում էր քրդերի տարանջատվածությունը, ցաքուցիվ լինելու պարագան, լեզվի ու կրոնի որոշակի տարբերությունները:

Քրդական շարժման արտահայտիչներն էին հետևյալ հիմնական կազմակերպությունները.

1. «**Քուրդիստան Թաալի ջամիյաթի**» («Քուրդիստանի վերածննդի ընկերություն»): Հիմնվել է 1918 թ. Կ. Պոլսում: Ղեկավարները քրդական ազդեցիկ ընտանիքներից էին՝ Աբդուլ Ղադերի (սախազահ) և Ամին Աալի Բադրխանի (տեղակալ) գլխավորությամբ:

Սա հետպատերազմյան ամենաազդեցիկ կազմակերպությունն էր: Սկզբնական շրջանում չափավոր դիրքորոշում ուներ քրդերի ազգային իրավունքների խնդրում և չէր դադարեցրել օսմանյան պաշտոնական շրջանակների հետ իր կապերը: Տեղին է նաև նշել, որ կազմակերպությունը պայքարում էր Ահմեդ Աղանի և Ջիա Գյոքալփի պանթուրանական գաղափարների դեմ, ուստիև մերժեց «Արևելյան վիլայեթների ազգային իրավունքների պաշտպանության ընկերության» հետ միությունը: Սակայն Աբդուլ Ղադերը վճռականապես դեմ էր նաև հայերի և քրդերի միավորված գործելուն՝ իրենց ընդհանուր խնդիրների լուծման նպատակով: Ի դեպ, նույն պահանջկոտությամբ նա դեմ էր սուլթանից անկախ քրդական պետության ստեղծմանը: Աբդուլ Ղադերի կողմնակից «ինքնավարականները» Օսմանյան կայսրության կազմում քրդական ինքնավարության պահանջից այն կողմ չանցան: Ամին Աալի Բադրխանի որդու պատկերավոր արտահայտությամբ՝ նրանց «մեկ ոտքը քրտական քէմփի մէջն էր, իսկ միւսը օսմանյան իսլամական քէմփի...Նրանք կուզէին նախարար լինել»<sup>3</sup>: Սակայն հետագայում, ներքաղաքական պայքարի սրման հետևանքով այս ընկերությունը պառակտվեց, ու նրա անդամների մի մասն առանձնանալով՝ ստեղծեց նոր կազմակերպություն<sup>4</sup>:

2. «**Քուրդ Թէշքիլէք ի Իջթիմա ի ջամիյաթ**» («Քրդական ընկերային կոմիտե-Սոցիալական ասոցիացիաների քրդական ընկերություն»): Ղեկավարը Ամին Աալի Բադրխանն էր:

Սրանք նպատակադրվել էին անջատվել Թուրքիայից և ստեղծել անկախ քրդական պետություն: Կոմիտեն գլխավորապես հենվում էր Բադրխանների հայտնի տոհմի աջակցության վրա, իսկ վերջիններս թուրքերի հետ ընդհանուր քաղաքական և տնտեսական շահեր չունեին: Հետագայում հավատարիմ մնալով նման քաղաքական վարքագծին՝ նրանք Շերիֆ փաշային ընտրեցին Փարիզի խորհրդաժողովում իրենց ներկայացուցիչ:

3. «**Քուրդ Իսթիքլալ ջամիյաթի**» («Քրդական անկախության կոմիտե»): Ստեղծվել է 1920 թ. հոկտեմբերին Կարինում (Էրզրում) Ջիբրանլի Խալիդբեյի նախագահությամբ: Սրանք ծավալեցին ակտիվ գործունեություն: Կապ հաստատելով Ամին Աալի Բադրխանի հետ՝ ձգտում էին հասնել Քուրդիս-

3 Օթմէն Ա., Քրտական ազգայնականություն և դրդողներ և պատմական ազդեցություններ, «Դրոշակ», Աթէնք, 1990, N 6-7, էջ 57:

4 Տե՛ս Գասրայն Մ., Курды Турций в новейшее время, Е., 1990, էջ 6-9. Курдское движение в новое и новейшее время, с. 87.

տանի անկախությանն Ազգերի Լիգայի միջոցով<sup>5</sup>:

Տեղին է նշել, որ Ս. Օթմենի տվյալներով՝ այս կոմիտեն հիմնվել է Սուրեյա Բադրխանի կողմից Կահիրեում և կարևոր դեր է խաղացել Փարիզի խաղաղության խորհրդաժողովի ժամանակ՝ քրդական խնդրի վրա ուշադրություն բևեռելով<sup>6</sup>:

Առաջին աշխարհամարտից հետո քրդական շարժման մեջ ընդհանուր առմամբ գոյություն ունեին հինգ հիմնական հոսանքներ.

Քուրդիստանի լրիվ անկախությունը և ինքնուրույնությունը պահանջողներ՝ ի դեմս «Քրդական անկախության կոմիտեի»,

Թուրքական պետության շրջանակներում Քուրդիստանի ներքին ինքնավարության կողմնակիցներ՝ ի դեմս «Քուրդիստանի վերածննդի ընկերակցության» անդամների մի մասի,

Իրանի պրոտեկտորատի ներքո Քուրդիստանի «անկախության» տեսակետը պաշտպանողներ՝ հանձինս մի քանի ազդեցիկ քուրդ գործիչների, որոնք դիվանագիտական աշխարհում կարևոր դեր էին կատարում՝ Շերիֆ փաշայի գլխավորությամբ,

Անգլիայի հովանու ներքո Քուրդիստանի «անկախություն»՝ սեփական դրոշով և քրդական պետական լեզվով. սա Իրաքի քրդական շարժման տեսակետն էր,

Քրդերի լրիվ ենթարկում Թուրքիային: Այս հոսանքն իշխող էր հատկապես քենալական շրջանակների հետ համագործակցող քրդերի շրջանում<sup>7</sup>:

Քրդերը միջազգային ասպարեզ ելան ուժերի նման դասավորությամբ: Տվյալ պատմաշրջանում քրդերի աջակիցը Բրիտանական կայսրությունն էր, որն այդ ժամանակ Անտանտի երկրներից առավել շահագրգռված էր Օսմանյան կայսրության կործանման հարցում: Այս իրողությունը որոշակի հակասություն էր ստեղծում մերձավորարևելյան քաղաքականության մեջ ավելի մեծ կշիռ ունեցող հայկական գործոնի հետ:

## 2. Հայ-քրդական տարածքային վեճը և Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը

Քրդական և հայկական տարածքային պահանջները փոխադարձաբար միմյանց համար խոչընդոտներ էին ստեղծել: Ճիշտ է, ընդդեմ ընդհանուր հակառակորդ հայերի խանգարիչ պարագայի՝ քրդերը կարող էին համագործակցել և դաշնակցել թուրքերի հետ, սակայն դա էլ սովորաբար կրում էր ժամանակավոր բնույթ, քանզի վերջին հաշվով գոյություն ուներ նաև թուրք-քրդական հակամարտությունը, որը թուրքերի գերիշխանության պայմաններում լուրջ հիմքեր ուներ:

Զուրկ լինելով պետականությունից՝ քրդերը ևս Փարիզի վեհաժողով ուղարկեցին սեփական պատվիրակություն՝ Շերիֆ փաշայի գլխավորությամբ: Նա Դերսիմից էր, Արդուլ Համիդ Բ-ի ժամանակ եղել էր դեսպան

5 Տե՛ս Գասրաթյան Մ., *цит. соч.*, էջ 8-9. Օթմեն Ս., նշվ. աշխ., էջ 56-57:

6 Տե՛ս Օթմեն Ս., նշվ. աշխ., էջ 56:

7 Տե՛ս Լախուտին, Курдистан и курды, «Новый Восток», 1923, кн. 4, էջ 66.

Բեռլինում և Ստոկհոլմում: «Քուրդիստանի վերածննդի ընկերության» առաջարկով վերջինս հրաժարվեց Օսմանյան խորհրդարանի պատգամավորի լիազորություններից և իրեն հռչակեց Քուրդիստանի ներկայացուցիչ<sup>8</sup>:

Մինչ այդ նա բանակցել էր Իրանի ԱԳՆ-ի հետ՝ Իրանի հովանու ներքո անկախ Քուրդիստանի հռչակման խնդրի շուրջ<sup>9</sup>: Իսկ Ֆրանսիայի ԱԳՆ-ի հետ բանակցելով՝ խոստացավ ապստամբություն բարձրացնել անկախ Քուրդիստանի ստեղծման գործում դաշնակիցներից օգնություն ստանալու դեպքում<sup>10</sup>:

Ի դեպ, հետաքրքիր էր անգլիացիների վերաբերմունքը: Այսպես, Հնդկաստանի գործերով բրիտանական նախարարը Բադդադի վարչակազմին հայտնում էր, որ Շերիֆ փաշայի ծառայությունները դաշնակիցների առջև մեծ չեն և գնահատվում են ոչ բարձր: Ելնելով այդ ամենից՝ գտնում էր, որ նրա անձը ցանկալի չի համարվում որպես ապագա քրդական պետության ղեկավար՝ չնայած այն հանգամանքին, որ նա ձգտում էր այդպիսին երևալ<sup>11</sup>:

Շերիֆ փաշային ոչ ոք պաշտոնապես չէր ճանաչում որպես քրդական պատվիրակության նախագահ: Ասենք՝ պատվիրակություն էլ փաստորեն չկար, ինչը նշանակալից էր քրդական ցեղերի ընդհանուր տարանջատվածության ֆոնի վրա, երբ բրիտանական արտգործնախարար Քերզոնի բնորոշմամբ՝ «ոչ մի քուրդ կթվի ներկայացնել իր ցեղից ավելին, Շերիֆ փաշան որպես քրդերի ներկայացուցիչ կուգա, բայց քրդերը որպես այդպիսին չեն ընդունի իրեն»<sup>12</sup>:

Թեպետ Շերիֆ փաշան պարտավոր էր վեհաժողովում ներկայացնել քրդերի շահերը, սակայն թե՛ իր նախորդ շրջանի գործունեությունից և թե՛ հատկապես քննարկվող ժամանակահատվածում որդեգրած դիրքորոշումից ակնհայտ էր դառնում, որ նա հետապնդում է գերազանցապես մեկ նպատակ՝ քրդական խնդրի մակերեսային և անհետևողական արծարծումով հնարավորինս չեզոքացնել Հայկական հարցի արդարացի կարգավորմանն ուղղված Հայաստանի առաջին Հանրապետության պահանջատիրական հայքը: Փաստորեն, Շերիֆ փաշան սուլթանական կառավարության պատվերը կատարող սոսկական պաշտոնյա էր, ով լավագույնս իրականացրեց թուրքերի կողմից իր վրա դրված այդ պարտականությունը, միաժամանակ, միջազգային դիվանագիտական թատերաբեմում առնվազն անլրջացնելով նաև քրդերի պահանջների ներկայացման առաջադրանքը:

Ինչևէ, 1919 թ. մարտի 22-ին Շերիֆ փաշան Փարիզի վեհաժողովին ներկայացրեց քրդերի պահանջներն ամփոփող հուշագիրը: Այնտեղ հռչակվում էին «քուրդ ազգի օրինական պահանջները», որոնք հակադրվում էին «Հայաստանի կայսերապաշտական նկրտումներին» և նախատեսում անկախ քրդական պետության ստեղծումը: Նրանում արդարացվում էր նաև քրդերի կողմից հայկական հողերի զավթումը: Թուրքիայի քրդաբնակ տարածքների ազգագրական սահմաններ էին հռչակվում. հյուսիսում՝ կով-

8 Տե՛ս **Safrastian A.** Kurds and Kurdistan. London, 1948, էջ 77; **Гасратян М.**, цит. соч., с. 15.

9 Տե՛ս **Гисаров М.**, Курдский вопрос в Турции, «Страны и народы Ближнего и Среднего Востока», Е., 1975, էջ 44.

10 Տե՛ս Курдское движение в новое и новейшее время, էջ 75.

11 Տե՛ս **Лазарев М.**, Империализм и Курдский вопрос, Москва, 1989, էջ 104.

12 **Օթմէն Ա.**, նշվ. աշխ., էջ 58:

կայան սահմանը, արևմուտքում՝ Երզնկա-Դիվրիգի գիծը, հարավում՝ Սինջար-Քիրքուք-Սուլեյմանիա գիծը, արևելքում՝ Ռևանդուզ-Բաշքալե գիծը և ապա պարսկական սահմանով՝ մինչև Արարատ լեռը: Վճռականորեն մերժվում էին Դիարբեքի (Ամիդ), Վանի, Էրզրումի (Կարին) և Բաղեշի (Բիթլիս) վիլայեթների հանդեպ հայերի պահանջները<sup>13</sup>:

«Քուրդիստանի վերածննդի ընկերության» հայտնի գործիչ Քյամուրան Ալի Բադրխանի կարծիքով նույնպես թուրքական Քուրդիստանը պետք է ներառեր Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի և Խարբերդի վիլայեթները՝ մոտ 207 հազար քառակուսի կիլոմետր տարածք<sup>14</sup>:

Քրդերը փաստորեն հիմնականում հավակնում էին այն հողերին, որոնք պատմականորեն պատկանում են հայերին և գտնվում էին հայկական պահանջների սահմաններում: Հիշյալ տարածքների նկատմամբ քրդերի անհիմն նկրտումները իրապաշտության դիրքերից քննելու դեպքում նրանց օգտին խոսող միակ փաստարկը դարձել էր քանակական առավելությունը, որն էլ արդյունք էր հայերի հանդեպ իրագործված ցեղասպանության:

Շերիֆի հուշագիրը Փարիզի վեհաժողովում ոչ միայն արժանի գնահատականի չարժանացավ, այլև նույնիսկ լրջորեն չընդունվեց և արհամարհանքով անտեսվեց: Մ. Լազարևի դիպուկ բնորոշմամբ՝ քրդական հուշագրի քաղաքական արդյունավետությունը հավասար էր զրոյի: Վերջապես՝ հուշագրի ճակատագրի վրա բացասական ազդեց նաև նրա թունդ հայատյաց ոգին<sup>15</sup>:

Այսպիսով, Շերիֆ փաշայի հուշագիրը Փարիզի դիվանագիտական շրջանակները, ինչ-որ տեղ արհամարհելով, անտեսեցին, իսկ հետագայում այն լրիվ մոռացության մատնվեց: Եվ եթե քրդական հուշագիրն ընդհանրապես անտեսվեց, ապա հայկականը որոշակի ձևափոխություններից հետո հետագայում դրվեց Սևրի պայմանագրի հիմքում:

Հուշագրի նկատմամբ յուրահատուկ էր հայ քաղաքական մտքի վերաբերմունքը: Անդրադառնալով քրդական պետության ստեղծման հնարավորությանը՝ Մ. Փորթուզայանի «Արմենիան» նշում էր, որ ամեն անգամ, երբ հայկական հարցը սուր հանգամանք է ձեռք բերում, մեջտեղ է նետվում նաև քրդական հարցը: Շեշտվում էր նման ձգտման շատ որոշակի նպատակը՝ Միացյալ Հայաստանի անկախության խնդիրը «խեղդելու համար մեջտեղ կհանվին բոլորովին բռնազբոսիկ և պատմական ու իրավական հիմքերէ գուրկ հարցեր»<sup>16</sup>:

Եվրոպական տերությունները և առաջին հերթին՝ Բրիտանական կայսրությունը անտարբեր չէին քրդական շարժումների հանդեպ՝ քրդական հարցը դիտարկելով մերձավորարևելյան տարածաշրջանի ընդհանուր խնդիրների ենթատեքստում: Այն իրողությունը, որ քրդական հարցը բրիտանացի արտգործնախարար Քերզոնի ուշադրության կենտրոնում էր, ակնհայտ է դառնում 1919 թ. օգոստոսի 12-ի՝ ծովակալ Ուեբբին ուղարկված հեռագրում<sup>17</sup>:

13 Տե՛ս **Лазарев М.**, цит. соч., էջ 137.

14 Տե՛ս **Гисаров М.**, цит. соч., էջ 43.

15 Տե՛ս **Лазарев М.**, цит. соч., էջ 137-138.

16 «Արմենիա», Սարսել, 1919, ապրիլի 23, N 38:

17 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972, էջ 548: Documents on British Foreign Policy (DBFP), vol. 3, London, 1947, p. 728.

Քերզոնը, քննարկելով հայ-քրդական սահմանագծման խնդիրը, գտնում էր, որ դեռ «բոլորովին անժամանակ և խիստ վտանգավոր է Հայաստանի և Քրդստանի սահմանների գծումը»<sup>18</sup>:

Պարզելով Բրիտանական կայսրության իրական քաղաքական նպատակները՝ Հոլլերը Քերրին գրում էր, որ պետք է քրդական հարցին մոտենալ «գրեթե բացառապես Միջագետքի տեսանկյունից»՝ ավելացնելով, որ հայ-քրդական սահմանագծումն անորոշ թողնելուն ինքն էլ է կողմ: Իսկ Կ. Պոլսում բրիտանական գերագույն կոմիսարը ԱԳՆ-ին հայտնում էր, որ քրդերի նկատմամբ իրենց գործելակերպի ողջ հիմքը պետք է լինի «Միջագետքի հետ բավարար սահմանների երաշխավորումը»: Վերջապես՝ տարածաշրջանի շահերից ելնելով՝ նա անհնար էր համարում Շերիֆ փաշայի պահանջները լուրջ ընդունելը<sup>19</sup>:

Սակայն, որքան էլ ուշադրություն դարձնեին բրիտանական շրջանակները քրդական հարցին, այնուամենայնիվ, նրանք այն հիմնականում ստորադասում էին «բուն թուրքական» և հայկական խնդիրներին՝ հաշվի առնելով դրանց կշիռը միջագագային հարաբերությունների համակարգում: Նրանք այդ երեք հարցերը միշտ քննարկում էին և փորձում կարգավորել միասնության մեջ՝ պարզորոշ հասկանալով, որ մեկի լուծումն առանց մյուսների որոշման կլինի թերի և ժամանակավոր:

Ի դեպ, որքան էլ Օսմանյան կայսրությունը կորցրել էր երբեմնի ազդեցությունը, այնուամենայնիվ, անգլիացիները 1919 թ. սեպտեմբերի 12-ին թուրքերի հետ կնքեցին գաղտնի պայմանագիր, որով Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունը ենթադրաբար համաձայնեց անկախ Քուրդիստանի ստեղծմանը<sup>20</sup>:

Անգլիացիների համար ժամանակի ընթացքում Քուրդիստանի ռազմավարական կշռի աճին զուգահեռ կարևորվեց հայկական և քրդական խնդիրների սերտ փոխկապակցումը: Շատ հաճախ՝ Հնդկաստանի համար Միջագետքի ունեցած անհամեմատ կարևոր նշանակության հետ կապված, անգլիացիները երբեմն գերադասում էին քրդական տարրի դերը, հաճախ էլ նույնացնում էին հայկական և քրդական խնդիրները: Իզուր չէր, որ Հնդկաստանի գործերով բրիտանական նախարարության փորձագետ Արթուր Հիրցելը համարում էր, որ «հայկական հարցը քրդական հարց է»<sup>21</sup>:

Անգլիացիների հետաքրքրությունը քրդերի հանդեպ միակողմանի բնույթ չէր կրում: Ինչպես Քերզոնին տեղեկացնում էին՝ Շերիֆ փաշան մտադիր էր մի հուշագրով բրիտանական մանդատ խնդրել Քուրդիստանի համար և հույս ուներ ստանալ բրիտանական կառավարության հավանությունը<sup>22</sup>: Շերիֆ փաշան բրիտանական ԱԳՆ-ին խնդրել էր, որ Կ. Պոլսում իրենց գերագույն կոմիսարը «հովանավորի» քրդական ակումբին, եթե նրան Մուստաֆա Քեմալի կողմից վտանգ սպառնա<sup>23</sup>: Ահա մոտավորապես այսպիսի պատկեր ունեին քրդական խնդրի նկատմամբ բրիտանական մոտեցումները:

18 Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 549: DBFP, vol. 4, London, 1948, pp. 735-736.

19 Տե՛ս Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 553-55: DBFP, vol. 4, pp. 742-43.

20 Տե՛ս **Helmreich P.** From Paris to Sevres. Columbus, 1971, էջ 181.

21 **Лазарев М.**, цит. соч., с. 107.

22 Տե՛ս Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 567:

23 Տե՛ս Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 570:

### 3. Հայաստանի առաջին Հանրապետության դիրքորոշումը

1918–1919 թթ. ՀՀ կառավարությունը հնարավորություն չունեց հանգամանալից կերպով զբաղվելու հայ-քրդական հարաբերություններով<sup>24</sup>: Դա բացատրվում էր նրանով, որ Հայկական հարցը համընդհանուր ճանաչման էր արժանացել և ընդունելություն գտել, և Արևմտյան Հայաստանի խնդիրը գրեթե լուծված էր համարվում:

Տերությունները բազմաթիվ խոստումներ էին տալիս, և Կ. Սասունու խոսքերով՝ «հայկական դիրահալատությունը» ոչ կարևոր խնդիր էր համարում փոքր հարևանների հետ փոխհարաբերությունների կարգավորումը: Ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանց կողմից ևս հաշտության և համագործակցության ձգտում գրեթե չէր նկատվում<sup>25</sup>:

ՀՀ ղեկավար շրջանակները 1919 թ. աշնանից մտահոգված էին արևմտահայ նահանգների ազատագրման խնդրով, որում ամենամեծ խոչընդոտը թշնամաբար տրամադրված քրդական բնակչությունն էր: Այս կապակցությամբ ուշագրավ է ՀՀ կառավարության 1919 թ. դեկտեմբերի 12-ի ընդլայնված նիստում ընդունված որոշումը: Նիստին մասնակցում էին նաև ՀՅԴ Բյուրոյի անդամները և Երևանի թեմի առաջնորդ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը: Քննելով քրդական խնդիրը՝ շեշտվեց, որ ՀՅԴ Բյուրոյի տեսակետն այն է, որ հայերը չպետք է խոչընդոտ հանդիսանան և պետք է զիջեն այն վայրերը, որոնք քուրդ բնակչություն ունեն: Նման վայրերի շարքում նշվում էին Մոսուլը, Սղերդը և Հաքյարին: Հայ-քրդական համագործակցության ստեղծման նպատակով ՀՅԴ Բյուրոն ցանկալի էր համարում, որ «քրդական հայտնի ցեղապետ և խալիֆայի հաջորդ» Աբդուլ Ղադերը այցելի Գևորգ Ե. Կաթողիկոսին, ինչը կունենա շատ մեծ նշանակություն, և քրդերը կփոխեն իրենց վերաբերմունքը հայերի հանդեպ, քանի որ «Աբդուլ Ղադերը սրբություն է քրդերի համար»: Այդ այցելությունն իրականություն դարձնելու համար կառավարության կողմից Կ. Պոլսում անհրաժեշտ քայլեր պետք է արվեին: Այս ամենի մասին Խորեն Մուրադբեկյանն իր հերթին տեղեկացրեց Գևորգ Ե. Կաթողիկոսին<sup>26</sup>:

Անտարակույս, այս ծրագրի իրականացումը դրական մեծ քայլ կլիներ, սակայն հանդիպումն այդպես էլ տեղի չունեցավ: Նրա չկայացման պատճառների բացահայտման նպատակով մեր իրականացրած փնտրտուքի արդյունքում դեռևս անհրաժեշտ վավերագրեր չեն հայտնաբերվել:

Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի Հանրապետության հանդեպ քրդերն առերևույթ լոյալությունից այն կողմ չանցան: Ավելին, հետագայում՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, Օլթիի և Կողբի շրջանների քրդերը նույնիսկ անցան թուրքերի կողմը: Մինչ այդ՝ 1920 թ. հունվարից սկսած, ՀՀ կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում քրդերի հետ նորմալ հարաբերությունների հաստատմանը՝ ձգտելով նրանց դարձնել Հայաստանի բարեկամներ: Կառավարության որոշմամբ և ներքին գործերի

24 Տե՛ս **Սասունի Կ.**, Քիւրտերու և հայերու ազատագրական շարժումներու փուլերը և անոնց փոխյարաբերութիւնները, «Հայրենիք», Պոսթըն, 1930, N 1, էջ 84-91:

25 Տե՛ս **Սասունի Կ.**, Քուրդ ազգային շարժումները և հայ-քրդական յարաբերութիւնները ԺԵ դարէն մինչև մեր օրերը, Պէյրուս, 1969, էջ 229:

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 205, թ. 6:



նախարարության հրահանգով Կարո Սասունին 1920 թ. մարտ-մայիս ամիսներին տեսակցեց մի շարք ձանաչված քրդերի հետ, բայց միայն եզդիները պատրաստակամություն հայտնեցին համագործակցել<sup>27</sup>:

Այսպիսով, միջազգային ասպարեզում հայկական և քրդական խնդիրների համատեղ հանդես գալու պայմաններում երկու ժողովուրդների հարաբերությունները կնճռոտված էին: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հայերի և քրդերի պահանջած տարածքները շատ դեպքերում համընկնում էին, ինչը զգալիորեն խոչընդոտում էր իրական համագործակցության հաստատմանը:

Այս առումով հիշատակենք Կ. Սասունու հետևյալ դատողությունը. «Տարածքային հարցերում դրսևորվող ծայրահեղությունները մեծապես կխանգարեին գործնական համաձայնության կարելիությունները: Հետևաբար, մեծ տերությունների դերը հետզհետե կավելնար ու փրկությունը նրանցից կսպասվեր: Դաշնակիցների տված լուծումն էր, որ մի կամ մյուս կողմը իրողության առջև պիտի դներ»<sup>28</sup>:

#### 4. 1919 թ. հայ-քրդական համաձայնագիրը

Հայ-քրդական հակասությունների մեղմացման և հարթեցման ուղղությամբ դիվանագիտական աշխատանքները սկսվել էին դեռևս 1919 թ. գարնանից: Սա ձեռնառու էր երկու կողմերին գրեթե հավասարապես: Եթե քրդերին այն անհրաժեշտ էր միջազգային ասպարեզում իրենց դիրքերն ամրապնդելու և ինչ-որ չափով նաև շնորհիվ Հայկական հարցի հեղինակության՝ դիվանագիտական շրջանակներում որոշակի կշիռ ձեռք բերելու համար, ապա Հայաստանին այն պետք էր ավելի շատ ներքին քաղաքականության բնագավառում առկա խնդիրների լուծման նպատակով: Այդ հանգամանքը կապված էր առաջին հերթին ընդհանուր թշնամու՝ թուրքական բռնատիրության դեմ հայ-քրդական համատեղ ճակատ ստեղծելու առաջադրանքի հետ: Ուստի հայերն ու քրդերը ձեռնամուխ եղան բանակցությունների: Արդեն 1919 թ. ապրիլի 18-ին Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի նախագահ Գ. Դավթյանը «Քրդական կոմիտեների հետ բանակցությունների սկսման անհրաժեշտության մասին» նամակով դիմելով Ազգային պատվիրակությանը, խորհուրդ էր տալիս նրան համաձայնագիր կնքել Շերիֆ փաշայի հետ՝ հայտնելով, որ առաջարկը գալիս է անգլիական աղբյուրից<sup>29</sup>: Իսկ մինչ այդ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանն էր կապվել քրդական ազգային ակումբների հետ և Ազգային պատվիրակությանն առաջարկել բանակցել Շերիֆ փաշայի հետ<sup>30</sup>:

Հայ-քրդական համաձայնության հասնելու ծրագիրը քննարկվեց նաև հայկական զույգ պատվիրակությունների նիստում և միաձայն ընդունվեց: Վերջապես՝ 1919 թ. նոյեմբերի 20-ին Փարիզում կնքվեց հայ-քրդական համաձայնագիր, որը հայկական կողմից ստորագրեցին Ազգային պատվիրա-

27 Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 229-231:

28 Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 234:

29 Տե՛ս Berberian H., The Delegation of Integral Armenia, «Armenian Review», 1991, N 1, էջ 42.

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 46:

կության նախագահ Պողոս Նուբարը և ՀՀ պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանը, իսկ քրդերի կողմից՝ Քրդական պատվիրակության նախագահ Շերիֆ փաշան: ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանն այդ օրը բացակա էր, և այդ պատճառով նրա փոխարեն ստորագրեց երկրորդ պատվիրակը:

Համաձայնագիրը կազմված էր հայտարարության ձևով՝ ուղղված Փարիզի խաղաղության վեհաժողովի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ ժորժ Կլեմանսոյին: Հաշվի առնելով սույն փաստաթղթի արդիական մեծ նշանակությունը՝ այն ներկայացնենք ամբողջությամբ.

**«Մենք՝ ներքոստորագրեալներս, խորհրդաժողովի հայ եւ քուրդ ազգերի ներկայացուցիչներս, պատիւ ունենք տեղեկացնելու հաշտարար կոնֆերանսին, որ մեր երկու ազգերը, երկուսն էլ արիական ցեղից, միեւնոյն շահերն ունեն եւ հետապնդում են միեւնոյն նպատակը՝ իրենց ազատութիւնը եւ անկախութիւնը, մասնաւորապէս հայերի համար՝ ազատագրում թուրքական տիրապետութիւնից եւ ընդհանրապէս երկուսի՝ թէ՛ հայերի եւ թէ՛ քրդերի համար՝ ազատագրումը «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կոմիտէի լծից, որի պաշտօնական եւ գաղտնի կառավարութիւններն այնքան չարաղէտ եղան թէ՛ հայերին եւ թէ՛ քրդերին: Մենք բոլորովին համաձայն ենք միասին խնդրելու հաշտարար խորհրդաժողովից, որ կազմուի՝ համաձայն ազգութեան սկզբունքների, Միացեալ եւ Անկախ Հայաստան եւ Անկախ Քրդստան մեծ պետութեան աջակցութեամբ, որ նշանակուելու է երկու ազգերի իղձերը լսելուց յետոյ, որպէսզի կարողանայ տալ մեր երկրներին նրանց վերաշինութիւնների շրջանում իր տէխնիկական եւ տնտեսական օժանդակութիւնը: Ինչ վերաբերում է վիճելի հողամասերի բաժանմանը, որոնք մատնանշուած են մեր երկուսի կողմից հաշտութեան խորհրդաժողովին ներկայացրած յուշագրերի մէջ եւ երկու ապագայ պետութիւնների սահմանների վերջնական գծմանը, մենք յայտարարում ենք, որ կենթարկուենք հաշտարար խորհրդաժողովի վճիռներին՝ համոզուած լինելով, որ նրա վճիռը հիմնուած է արդարութեան եւ իրաւունքի վրայ: Բացի այդ, մենք յայտարարում ենք, որ բոլորովին համաձայն ենք յարգելու երկու պետութիւնների փոքրամասնութիւնների իրաւունքները»<sup>31</sup>:**

Պատմագիտական գրականության մեջ ոչ էական անձնություններ կան համաձայնագրի արտաքին անվանման և կնքման վերաբերյալ: Այսպես, Մ. Լազարևը գտնում է, որ համաձայնագիրը ձևակերպվել է հուշագրի (memo) տեսքով 1919 թ. դեկտեմբերի 10-ից ոչ ուշ: Ըստ նրա՝ համաձայնագրի բնագիրը չի հայտնաբերվել<sup>32</sup>: Նշենք, որ այն գտնվում է Ֆրանսիայի Արտաքին հարաբերությունների նախարարության արխիվում<sup>33</sup>: Մ. Հասարաթյանը «համատեղ հայտարարության» կնքման ժամկետ է համարում 1919 թ.

31 «Յառաջ», Եր., 1920, փետրվարի 5; «Պահակ», Պոսթըն, 1920, փետրվարի 27: Ֆրանսերեն տեքստը տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 71: Կ. Սասունու մոտ տեքստում առկա են ոչ էական ոճական տարբերություններ: Տես Քիւրտերու և հայերու ազատագրական շարժումներու փուլերը և անոնց փոխյարաբերութիւնները, «Հայրենիք», Պոսթըն, 1930, N 1, էջ 89:

32 Տես *Лазарев М.*, *ист. соч.*, էջ 171, 298.

33 Տես *Օթմէն Ա.*, նշվ. աշխ., էջ 59:

դեկտեմբերի 20-ը<sup>34</sup>: Այս թուրիմացությունը հավանաբար գալիս է դեռևս 1930-ական թվականներից<sup>35</sup>:

Հայ-քրդական համաձայնության կայացումը իր բազմաթիվ թելերով և խոստումնալից հետևանքներով անմիջականորեն շաղկապված էր Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության հետ: Չնայած Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների հանդեպ ոչ միատեսակ մոտեցմանը և նրանց միջև երկպառակության սերմանմանը, այնուամենայնիվ, բրիտանական կառավարությունը ժամանակի միջազգային իրադրության ու ռազմաքաղաքական պայմանների թելադրանքով, իսկ երբեմն՝ ստիպողաբար, աջակցում էր այդ ժողովուրդների համախմբմանը:

Այս հանգամանքը պայմանավորված էր ընդհանուր թշնամու՝ Թուրքիայի դեմ միասնական ուժերով համատեղ ձակատ ստեղծելու ձգտումով: Այլևս անհնար էր երբեմնի բարեկամ Թուրքիայի հետ պահպանել նախկին բարիդրացիական հարաբերությունները: Այդ պատճառով Բրիտանական կայսրությունը հենց սկզբից դրականորեն ընդունեց հայ-քրդական համաձայնությունը և ըստ ամենայնի պաշտպանեց այն:

Արդեն 1919 թ. դեկտեմբերի 10-ին արտգործնախարար Քերզոնը Կ. Պոլսում բրիտանական կոմիսար ծովակալ Ռոբեկին հեռագրեց. «Քրդերն ու հայերը համանման շահեր և բաղձանքներ ունեն և Թուրքիայից ազատություն են պահանջում մեկ մանդատատեր պետության հովանու ներքո»: Ծովակալ Ռոբեկը դեկտեմբերի 11-ին ԱԳՆ-ին հեռագրեց, որ ինքը «համաձայնությունը դիտում է իբրև երջանկագույն մի նախանշան ... ես չչինչ չէի կարող պատկերացնել ավելի լավ չափված ձևված ուղղված դեպի ապահովություն և բանակցությունների բախտավորություն, քան նման մի պլան, և ես գտնում եմ, որ այն խնամքով պետք է քաջալերվի»: Ուստի բնավ պատահական չէ, որ Քերզոնն արդեն դեկտեմբերի 20-ին Ռոբեկին հրահանգում էր. «Ամեն մի հնարավոր խրախուսանք պետք է ցույց տրվի այդ շարժմանը»: Իսկ Կ. Պոլսում բրիտանական մեկ այլ ներկայացուցիչ՝ ծովակալ Ուեբբը, 1920 թ. հունվարի 8-ին ԱԳՆ-ին ուղղված ձեպագրում նշում էր. «Չնայած բոլոր տեսակետներից առավել ցանկալի է, որպեսզի քրդերը և հայերը հասկացողության գան և համաձայնեն համատեղ աշխատել, բայց և այնպես չի կարելի ասել, որ Պողոս Նուբարի և Շերիֆի միջև կնքված այդ համաձայնությունը որևէ բան կանի՝ հանգեցնելու դրան: Չնայած Շերիֆի՝ քրդերի խոսափող լինելու հավակնություններին, իրականում ոչ մի հիմք չկա նրան համարել ավելին, քան քրդական ծագում ունեցող մի անհատ, որն այնքան երկար է մնացել Եվրոպայում, որ ամբողջովին դուրս է մնացել այժմ իր երկրում գոյություն ունեցող պայմաններից: Հետևաբար, նրա հայացքները պարզապես նրա անձնական կարծիքի արտահայտությունն են և որևէ կերպ չեն կարող դիտվել իբրև քրդական ազգության բաղձանքների կամ զգացմունքների արտահայտություն»<sup>36</sup>:

Իզուր չէ, որ անգլիացիներն առարկություններ ունեին Շերիֆ փաշայի

34 Տե՛ս Гисаров М., цит. соч., էջ 45. Курдское движение, էջ 88.

35 Տե՛ս Кемаль М., Путь новой Турции, том 4, Москва, 1934, էջ 361. Ծանոթագրության մեջ նշված է «հայտարարություն» և դեկտեմբերի 20, իսկ ժամանակագրության մեջ՝ «համաձայնություն» և նոյեմբերի 20:

36 Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 600-601; DBFP, vol. 4, p. 928.

«ինքնանպատակ դերի» վերաբերյալ: Այս հանգամանքը պարզվեց Պողոս Նուբարի և Քերզոնի հանդիպման ժամանակ: Հետագայում Պողոս Նուբարը Ազգային պատվիրակությանը զեկուցեց, որ «Լորդ Քերզոնը Շերիֆ փաշային չի համարում բոլոր քրդերի ներկայացուցիչ»<sup>37</sup>:

Այսպիսով, անգլիացիները ոչ միայն հարցականի տակ դրեցին Շերիֆի հեղինակությունը, այլև հայերի հետ համաձայնության կնքման անկեղծությունը: Եվ բնավ ոչ առանց ետին մտքի, քանզի Շերիֆը Կ. Պոլսի քրդական ակումբներին հանգստացնում էր, որ ակտի ստորագրման մեջ իր գլխավոր նպատակը «ընդարձակ Հայաստանի ձևավորման խոչընդոտումն էր»: Նա միաժամանակ թուրքական մամուլին տեղեկացնում էր, որ ինքը «հաջողությամբ չեզոքացրեց հայկական պահանջները և Պողոս Նուբարին զցեց մեծ զիջման մեջ»<sup>38</sup>:

Ակտի կնքումը և «հայ-քրդական հասկացողությունը», Արշակ Սաֆրաստյանի խոսքով, «ապշեցրել էր» եվրոպական դիվանագետներին և լրագրողներին, որոնք համոզված էին, որ հարևան ցեղերը «մահացու թշնամիներ են և չեն կարող երբեք միասին աշխատել»<sup>39</sup>:

## 5. Համաձայնագրի գնահատականը հայկական շրջանակներում

Համաձայնագրի նկատմամբ ուշադիր էին հայերը, քանի որ այն ամենից առաջ շոշափում էր նրանց կենսական շահերը ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառներում: Հայ քաղաքական շրջանակների մոտեցումները և վերաբերմունքն այդ խնդրի հանդեպ միատեսակ չէին: Համաձայնագրի առնչությամբ կրթերը ծայրաստիճան սրվեցին հատկապես ամերիկահայ գաղութում: Հնչակյանները քանիցս քննադատեցին Պողոս Նուբար փաշային՝ գտնելով, որ նա Շերիֆ փաշայի հետ համաձայնագիր ստորագրելով՝ Քուրդիստան անունով է մկրտել հայկական նահանգները<sup>40</sup>:

Դաշնակցականները, քննադատելով հանդերձ, ցավ էին հայտնում, որ Հայաստանի Հանրապետությունն էլ է այդ փաստաթուղթը ստորագրել, և ավելացնում, որ եթե «Նուպար-Շերիֆ հիշատակագիրը» անփոփոխ մնա կամ չմերժվի, այն պիտի «սպանի հայ դատը», քանզի Պողոս Նուբար փաշան «աղետաբեր սխալ»<sup>41</sup> է գործել:

ԱՄՆ-ում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գարեգին Փաստրմաձյանը (Արմեն Գարո) 1920 թ. հունվարի 15-ին Պողոս Նուբարին բողոքեց նրա «հիմար քայլի» դեմ՝ արածը համարելով «ապօրինի և ազգային շահերը վտանգող քայլ»<sup>42</sup>: Նա իր մտքերը ծավալուն շարադրեց Ռուբենին (Մինաս Տեր-Մինասյան) 1920 թ. ապրիլի 6-ին գրած նամակում<sup>43</sup>: Որպես բողոքի

37 Hovhannisian R. Republic of Armenia. vol. 2, Los Angeles, 1982, p. 443.

38 Hovhannisian R. Republic of Armenia. vol. 2, p. 445.

39 Safrastian A. Kurds and Kurdistan, p. 77.

40 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, հունվար 31-փետրվար 2:

41 «Հայրենիք», Պոսթրն, 1920, փետրվարի 3:

42 «Հայրենիք», Պոսթրն, 1920, փետրվարի 17:

43 Տե՛ս «Դրօշակ», Աթէնք, 1997, N 19, էջ 24:

նշան՝ Արմեն Գարոն հրաժարվեց Ազգային պատվիրակությանն իր անդամակցությունից, սակայն վերջինս բավականացավ միայն հակիրճ զեկույցով պատասխանելով<sup>44</sup>:

Ի դեպ, Գ. Փաստրմաձյանի նման վերաբերմունքի բնորոշման տեսանկյունից իրավացի է Կ. Սասունին: Վերջինս նշում է, որ նրա բողոքին տոն էր տալիս այն տիրող մտայնությունը, որ այն ժամանակ ունեին հայ քաղաքական մտքի ղեկավարները, որոնք կարծում էին, թե «ծովե ծով մեր հողային իրավունքները անվիճելի են»<sup>45</sup>: Վերակազմյալ հնչակյանների կարծիքով՝ այս հարցի կապակցությամբ Գ. Փաստրմաձյանը պետք է քննադատեր ոչ թե միայն Պողոս Նուբար փաշային, այլ ամբողջ Ազգային պատվիրակությանը և ՀՀ ներկայացուցիչ Հ. Օհանջանյանին<sup>46</sup>:

Տեղին է նշել, որ Ռուբենին ուղղված Գ. Փաստրմաձյանի վերոնշյալ նամակում քննադատական մոտեցում կա նաև Հ. Օհանջանյանի հանդեպ:

Ըստ Վերակազմյալ հնչակյանների՝ համաձայնությունը «անպետական եւ դատապարտելի քայլ մըն» էր: Նրանք այն համոզմանն էին, որ եթե անկախ Քուրդիստանի սահմանները որոշվեին բուն քրդական երկրամասերում, ավելի դյուրին կլիներ համաձայնության ընդունումը: Քննադատությունից զերծ չննաց նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը: Իրենց խոսքը հստակեցնելով և ավելի կոնկրետացնելով՝ վերակազմյալները հայ պատվիրակների մեծագույն սխալն էին համարում Շերիֆ փաշայի նման «ծանոթ իթիլաֆականին»<sup>47</sup> վստահելը:

Հաշվի առնելով ամերիկահայ շրջանակներում միջկուսակցական կրքերի սրման փաստը և ձգտելով որոշակիորեն թուլացնել այդ լարվածությունը՝ Ավ. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան հեռագրեցին Ամերիկահայ Ազգային միության նախագահ Միհրան Սվազլիին, ուր հայտնում էին իրենց անհանգստությունը և չափազանց ցավալի նկատում մամուլում ի հայտ եկած վեճերը «հայ-քրդական հասկացողության» առթիվ և համարում, որ այդ համաձայնագիրը ոչ մի կերպ չի վնասում հայկական շահերին և պահանջներին<sup>48</sup>:

Հետաքրքիր են համաձայնագրի ստորագրման առիթով Ավ. Ահարոնյանի տված բացատրությունները: Նա գտնում էր, որ եթե դրանից հայերը օգուտ չունենան, ապա վնաս բնավ չեն ունենա: Նրա կարծիքով՝ օգուտ հնարավոր էր թեկուզև այն պատճառով, որ համաձայնագրով քրդերը հայերի հետ միասին պահանջում են անջատում Թուրքիայից և ճանաչում են հայկական անկախությունը: Նա համաձայնում էր, որ Շերիֆի անձնավորությունը շատ կասկածելի է և չի ներկայացնում քրդերի ամբողջականությունը: Բայց այդ փաստը տվյալ պարագայում համարում էր անարժեք: Ընդհանրացնելով ու վերջնական գնահատական տալով՝ Ավ. Ահարոնյանը հայ-քրդական համաձայնությունը համարում էր «պարզ մորալ մանիֆեստասիոն, որից չարիք չի կարող լինել»: Չնայած դրան՝ ՀՅԴ Ամերիկայի կենտրոնական կոմիտեն համաձայնագրին միանալու համար բողոք ներ-

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 46:

45 Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 236:

46 Տե՛ս «Պահակ», Պոսթըն, 1920, հունվարի 23:

47 «Պահակ», Պոսթըն, 1920, փետրվարի 27:

48 Տե՛ս Պահակ», Պոսթըն, 1920, փետրվարի 6; «Կոչնակ Հայաստանի», 1920, փետրվարի 7:

կայացրեց Ավ. Ահարոնյանին<sup>49</sup>:

Առանձնապես ուշագրավ են գորավար Անդրանիկի տեսակետները: Իր գործունեության ընթացքում մոտիկից ճանաչելով քրդերին և անմիջական շփման մեջ գտնվելով նրանց հետ՝ Անդրանիկը քաջատեղյակ էր քրդական իրականությանը: Անդրադառնալով համաձայնագրին՝ նա նշում էր, որ վախենալու և հուզվելու կարիք չկա երկու պարագաների պատճառով: Նախ, ըստ նրա՝ Շերիֆ փաշան երբեք չի ներկայացրել ամբողջ քուրդ ժողովուրդը, որը «անջատ և հակամարտ ընտանիքներից է բաղկացած»: Վերջապես, «Շերիֆ փաշան իր ցեղը ներկայացնելուց զատ ողջ քուրդ ազգը ներկայացնելու իրավասություն չունի»: Հետաքրքիր են Անդրանիկի պատկերացումները Քուրդիստանի աշխարհագրական սահմանների մասին: Քուրդիստանը, ըստ նրա, ձգվում է Մոսուլի լեռներից մինչև Ջուլամերիկ, Մդերդ և Տիգրանակերտի (նկատի ուներ Դիարբեքիքը) հարավային մասը: Այս պարագաները, Անդրանիկի համոզմամբ, հայ պատվիրակներն անհրաժեշտաբար պետք է գիտենային, որպեսզի չտրվեին այդ «անիմաստ քայլին»<sup>50</sup>:

Իր հերթին Շերիֆ փաշան «Մաթեն» և «Թայմա» թերթերին մի քանի նամակներ ուղղեց, ուր Թուրքիայի հարձակումներից ազդված՝ խեղաթյուրեց համաձայնության իմաստը և իր իսկ ստորագրած ակտի հայեցակետից սկզբունքորեն հեռացավ: Այս ամենը նա արեց՝ պաշտպանելով սուլթանի գերիշխանության ներքո քրդական ինքնավարության գաղափարը և փաստորեն ընդդիմանալով մինչ այդ առաջադրած անկախ Քուրդիստանի պահանջին<sup>51</sup>:

Համաձայնագրի ոգուն դավաձանող Շերիֆ փաշայի այս հայտարարություններն իրավացիորեն քննադատեց Պողոս Նուբար փաշայի աջակից Արշակ Չոպանյանը՝ հատկապես շեշտելով, որ կարևորը թրքական կայսրության բռնապետական լծից ժողովուրդների ազատագրումն է<sup>52</sup>:

Լեոն, ողջունելով հայ-քրդական գործակցությունը, գտնում էր, որ «հրաշք է հայ-քրդական համաձայնությունը»<sup>53</sup>:

Քրդական հարցի վերաբերյալ իր հանգամանալից կարծիքն արտահայտեց նաև ՀՅԴ Բյուրոյի «Յառաջ» պաշտոնաթերթը: ՀՅԴ-ի կառավարող կուսակցություն լինելու պարագան արդեն նշանակում էր, որ այդ կարծիքը, փաստորեն, ՀՀ կառավարության տեսակետներն էր ներկայացնում: Նախ՝ նշվում էր, որ քրդական խնդիրը սերտորեն կապված է Թուրքիայի հարցի լուծման հետ: Հարցը դիտարկելով անաչառության դիրքերից՝ շեշտվում էր, որ Քուրդիստանի խնդիրը չնայած ոմանք համարում են «արտաքին խարդավանքների արդյունք», բայց այն «իրապես գոյություն ունեցող կենդանի շարժում է»: Քրդական շարժումը քննելով սոցիալիզմի հայեցակետից՝ ցույց էր տրվում, որ «աշխատավոր քուրդը» իր շահերով բնավ դեմ չէ «հայ գյուղացուն և արհեստավորին», իսկ ազգամիջյան կռիվների չդադարելու պատճառը «քրդի տգիտությունն ու մոլեռանդությունն է և տաճիկ իշխողների պրովոկացիան»: Այս առթիվ շեշտվում էր քրդերի շրջանում «կուլ-

49 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 178, թթ. 6-7:

50 «Պահակ», Պոսթըն, 1920, փետրվարի 6: Կա նաև Անդրանիկի գծած քարտեզը:

51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 47:

52 Տե՛ս «Պահակ», Պոսթըն, 1920, ապրիլի 22:

53 «Սշակ», Թիֆլիս, 1920, փետրվարի 17:

տուրական հակումների զարգացման անհրաժեշտությունը և նրանց թուրքական ազդեցությունից ձերբազատումը», քանզի միայն դրանից հետո նա կդառնա «նստակյաց աշխատավոր և խաղաղ, շինարար ժողովուրդ»: Քրդական շարժումը ՀՅԴ Բյուրոյի պաշտոնաթերթը համարում էր «ըստ ամենայնի ողջունելի» և պատրաստակամություն հայտնում միշտ քաջալերել նրանց ազատագրական ձգտումներին: Որպես կարևոր եզրակացություն՝ շեշտվում էր քրդերի ու հայերի մերձեցման ու համերաշխության «հրամայականորեն անհրաժեշտ» լինելը, քանզի նրանք ունեն «միևնույն թշնամին», և երկուսի «վաղվա ճանապարհը նույնն է»<sup>54</sup>:

## 6. Քրդական հարցը Սևրի պայմանագրում

Ինչևէ, միջազգային դիվանագիտություն «հիմնավորապես» ոտք դրած նորաթուխ քրդական հարցը Փարիզի վեհաժողովից հետո եվրոպական տերությունների ջանքերով ավելի «ամրապնդվեց», ինչի վկայությունը քրդական պահանջների պաշտոնագրումն էր 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում: Նախկին Օսմանյան կայսրության արևելքում նպաստելով հայկական և քրդական պետությունների ստեղծմանը՝ Եվրոպան (առաջին հերթին՝ Բրիտանական կայսրությունը), այնուամենայնիվ, ձգտում էր ըստ կարելիության չեզոքացնել «Ծովից ծով Հայաստանը» և «Մեծ Քուրդիստանը», քանզի կողմերից մեկնումեկի առավել հզորացումը վերջինիս ապագայում կդարձներ մենատեր:

Եվ դա բնավ պատահական չէր, քանզի Անգլիան ԱՄՆ-ի նախագծած «Վիլսոնյան Հայաստանին» հակակշռելու համար սկիզբ դրեց իր ծրագրած «Քուրդիստանին»: Ի վերջո, նրան անհրաժեշտ էր մի պատվար, որով ապագայում հնարավորություն ունենար փակել դեպի Հայաստան, ապա նաև դեպի Միջերկրականի «տաք ջրեր» ռուսների հնարավոր առաջխաղացման ճանապարհը: Դրանով իսկ անգլիացիները ձգտում էին իրենց ապահովագրել Հնդկաստան տանող ռազմավարական ճանապարհի անվտանգության կայուն երաշխիքների տեսանկյունից: Իսկ նման պատվարի դերը ցանկանում էին վստահել քրդերին, քանզի հասկանում էին, որ հայերը կարող են նորից հարել ռուսական կողմնորոշման: Այդ առումով հայերի վրա անգլիացիները «հույս դնել» չէին կարող:

Վերջապես, ինչ էր տալիս քրդերին Սևրի պայմանագիրը: Նախ և առաջ, նշենք, որ Քուրդիստանի կարգավիճակին և նրա նախատեսվող սահմաններին պայմանագրում հատկացված էր առանձին բաժին 3 հոդվածներով (62-64): Եվ այսպես, պայմանագրով բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների նշանակած 3 անդամներից կազմված հանձնաժողովը փաստաթուղթն ուժի մեջ մտնելուց 6 ամսվա ընթացքում պետք է պատրաստեր տեղական ինքնավարություն այն նահանգների համար, որտեղ գերակշռում էր քրդական տարրը: Ծրագրվող Քուրդիստանը աշխարհագրականորեն տեղադրվում էր Եփրատից արևելք, Հայաստանի հարավային սահմանից հարավ և Թուրքիայի, Միջագետքի ու Սիրիայի

<sup>54</sup> «Յառաջ», Եր., 1920, փետրվարի 25:

հետ ունեցած սահմանից հյուսիս: Ընդ որում, հատկանշական է, որ նախատեսվող Քուրդիստանում պետք է պաշտպանության լրիվ երաշխիքներ տրվեին ասորա-քաղղեացիներին և ազգային ու կրոնական այլ փոքրամասնություններին: Ինչ վերաբերում է տեղում որոշվելիք խնդիրներին, ապա այդ նպատակով ստեղծվելիք մեկ այլ հանձնաժողովի աշխատանքներին թույլատրվում էր մասնակցել նաև քրդերին: Երկու հանձնաժողովների որոշումները թուրքական կողմը պարտավորվում էր ճանաչել և կատարել:

Ինքնավարությամբ «չբավարարվելով»՝ տերությունները Քուրդիստանի ապագա կարգավիճակի խնդրում իրենց համար գործողությունների ազատության հնարավորություն էին թողնում: Ուստի պայմանագրում նշվում էր, որ եթե նրա ուժի մեջ մտնելուց մեկ տարվա ընթացքում ինքնավար Քուրդիստանի բնակչությունը դիմի Ազգերի Լիգայի խորհրդին՝ հայտնելով, որ իր մեծամասնությունը ցանկանում է Թուրքիայից անկախ լինել, և եթե խորհուրդն էլ գտնի, որ այդ բնակչությունը «ընդունակ է նման անկախության», ապա Թուրքիան նախապես պարտավորվում է համակերպվել նման վիճակի հետ և հրաժարվել նրա տարածքների վրա ունեցած բոլոր իրավունքներից: «Պահեստային» կարգով տերությունները տեղ էին թողնում նաև այդ հիպոթետիկ «անկախ Քուրդիստանին» հետագայում Մոսուլի նահանգի քրդաբնակ մասերը միավորելու համար:

Այսպիսով, Սևրի պայմանագրի քրդական հոդվածների տրամադրությունն առաջին հայացքից կարծես թե տարածաշրջանային խնդիրների կարգավորման համակարգում հնարավոր առավելագույնն էր, որին կարող էին հավակնել քրդերը, և այն հիմնականում արտացոլում էր նրանց ձգտումները:

Քրդերի ազգային շահերի և իղձերի ամբողջությունը որևէ արմատական վերապահության ենթարկելու ցանկություն չունենալով հանդերձ՝ ավելորդ չենք համարում նշել, որ նրանք դժգոհելու պատճառներ չպետք է ունենային: Միջազգային դիվանագիտություն իրենց առաջին իսկ մուտքով հնարավորություն ստացան տիրանալ այնպիսի իրավունքների, որից ժամանակին գրկվել էին Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդներ (հայերը, արաբները): Թեև պայմանագիրը լիակատար ձևով չգոհացրեց քրդերի բոլոր պահանջները, որոնց շարքում կային նաև անհիմն նկրտումներ, սակայն նրանք ստիպված էին բավարարվել այն հանգամանքով, որ իրենց առաջնահերթ նպատակը՝ միջազգային ճանաչումը, ընդհանուր առմամբ իրականություն դարձավ: Այս տեսանկյունից Սևրի պայմանագրի բնորոշ հատկանիշն այն էր, որ միջազգային իրավունքի պայմանագրային համակարգում շրջանառության մեջ դրվեց քրդական գործոնը: Չետք է մոռանալ, որ մինչև Սևրը քրդական հարց՝ որպես այդպիսին, չկար:

Վերջապես՝ քրդական անկախ պետականության ստեղծումը շատ ավելի բարդ ու խճողված գործընթաց էր և կապված էր նախատեսվող Քուրդիստանի չափազանց մեծ աշխարհագրական ընդգրկման հետ: Ի դեպ, դեռ Սևրի պայմանագրի ստորագրման ժամանակ առկա հիշյալ խոչընդոտող հանգամանքն անհամեմատ ավելի մեծ սրությամբ գոյություն ունի նաև այժմ:

Կարևոր էր այն պարագան, որ որպես կանոն, քրդերի ամենալայն



զանգվածները գաղափար անգամ չունեին իրենց ինքնավարություն տվող հողվածների վերաբերյալ, անգամ չէին լսել պայմանագրի գոյության մասին: Ավելին, նույնիսկ չէին գիտակցում ինքնավարության գործոնի հեռահար քաղաքական նշանակությունը: Բայց այն հանգամանքը, որ «իրենց» որոշ հողերի վրա պետք է հայկական անկախ պետություն ստեղծվեր, նրանք շատ լավ էին հասկանում, ճիշտ է, ավելի շատ՝ ենթագիտակցորեն:

Ավելին, որպեսզի հայկական պետությունը չստեղծվեր, այն էլ՝ նման աշխարհագրական ընդգրկմամբ, քրդերն անհրաժեշտության դեպքում պատրաստ էին համագործակցել թուրքերի հետ և նույնիսկ ժամանակավորապես հրաժարվել սեփական անկախ պետության հիմնումից: Այս առումով բնավ պատահական չէր, որ քիչ անց Հայաստան արշաված Կարաբեքիրի բանակի մեծ մասը քրդերից էր բաղկացած: Որպեսզի հիշյալ միտքը վերացական չթվա, նշենք դրա օգտին վկայող ևս մեկ հանգամանք: Քրդերն անմիջականորեն Թուրքիայից անջատմանն ուղղված քայլերի դիմեցին միայն 1921 թ. հետո: Դա արդեն այն ժամանակ էր, երբ Սևրով նախատեսված հայկական պետության ստեղծման ծրագրերը փակուղի էին մտել և վերածվել սոսկ երևութական «ազգային օջախի»: Իսկ վերջինիս գոյությունից, եթե այն իրականություն դառնար անգամ, քրդերն իրենց շահերի տեսանկյունից արդեն ոչ մի իրական վտանգ չէին տեսնում:

Քրդերի առնչությամբ, Սևրի պայմանագրի հետ կապված՝ տեղին է անդրադառնալ մեկ հարցի ևս: Ինքնավարության կամ անկախության տեսքով Քուրդիստանի ձևավորում նախատեսող Սևրի պայմանագրի իրագործումը ժամանակի տարածաշրջանային հարաբերությունների պայմաններում խիստ կասկածելի էր: Ի վերջո, ո՞վ պետք է դրան գործնական տեսք տար: Անգլիան, սեփական ռազմաքաղաքական հնարավորությունների հետ կապված՝ որոշ կաշկանդվածության պատճառով ամենևին էլ պատրաստ չէր դրան: Մյուս կողմերը (Հայաստան, Թուրքիա, ԱՄՆ, Ֆրանսիա, արաբներ) ոչ միայն շահագրգռված չէին որևէ քրդական միավորի ստեղծմամբ (թեկուզ ինքնավար), այլև որոշ առումներով թշնամաբար էին տրամադրված, իսկ լավագույն դեպքում՝ այնքան էլ բարյացակամորեն չէին ընդունում տարածաշրջանում մի նոր պետական միավորի հայտնվելը, որը կարող էր հիմնավորապես խառնել նրա աշխարհաքաղաքական քարտեզը:

Վերջապես, հենց իրենք՝ քրդերը, նույնպես պատրաստ չէին Սևրի պայմանագրի իրականացմանը: Իսկ այդ պարագային նպաստող գործոնները բազմաթիվ էին՝ սոցիալ-տնտեսական հետամնացությունը, էթնիկական ու քաղաքական մասնատվածությունը, և այլն: Փաստորեն, քրդերն իրենց պետականորեն ինքնակազմակերպվելու հեռանկարի շուրջ ոչ միայն միասնական դիրքորոշում չունեին, այլև գտնվում էին մրցակցության շրջապտույտում: Ինչպես միշտ, հատկապես զգացնել էին տալիս նրանց «ավանդական» միջցեղային հակամարտությունները և տարանջատվածությունը: Եվ հենց այդ պատճառով էլ նրանք ո՛չ ղեկավար քաղաքական կուսակցություն ունեցան և ո՛չ էլ՝ բոլորի կողմից ընդունված առաջնորդ: Շերիֆ փաշայի նախաձեռնության անփառունակ վախճանը դրա վառ ապացույցն էր:

Այս ամենից հետո՝ տվյալ ժամանակաշրջանում տիրող իրականության պայմաններում ուղղակի անիմաստ էր խոսել քրդական պետական միա-

վորի ստեղծման մասին: Իսկ մեծ տերությունների կողմից Սևրին դավաճանելուց հետո որևէ քրդական պետական ծրագրի առաջքաշում լրիվ երևակայական համարվեց: Եվ իզուր չէ, որ իրենք՝ մեծ տերությունները, հանեցին այդ խնդիրը լուծման ենթակա տարածաշրջանային հարցերի համակարգից:

Այսուհանդերձ, քրդերի համար գլխավոր մրցակիցը և թշնամին թուրքերն էին, որոնց հետ ընդհարման դեպքում նրանց ուժերը ստիպված էին տեղի տալ: Նույնիսկ իր քենալամետ դիրքորոշմամբ հայտնի խորհրդային դիվանագետ Ս. Արալովը ժամանակին ստիպված էր խոստովանել, որ Մ. Քենալը, պաշտպանելով թուրքերի անկախության իրավունքը, նման իրավունքում մերժում էր հայերին և քրդերին<sup>55</sup>:

Հայերի համար ևս ընդունելի չէր Սևրով նախատեսվող՝ նման քրդական պետականության ստեղծումը: Շեշտում ենք՝ նման, քանզի հայերը մյուսներից պակաս շահագրգռված չէին այդ հարցի կարգավորմամբ: Դեռևս մինչև Սևրի պայմանագրի կնքումը Հայաստանում կառավարող ՀՅԴ Բյուրոն միանշանակորեն կարևորում էր քրդական պետականության ստեղծման անհրաժեշտությունը և ողջունում այն: Սակայն գոյություն ունեւր մի կարևոր հանգամանք, ինչի կողքով անտարբեր անցնել հայերը պարզապես չէին կարող: Այս առթիվ ուշագրավ են հայ-քրդական փոխհարաբերությունների նորմալացման հանդեպ ուշադիր Ն. Ադոնցի տեսակետները: Անդրադառնալով Սևրի պայմանագրին՝ Եփրատից արևելք ընկած հողերը Քրդստանին վերապահելու առումով նա նշում էր, որ նման քայլը «բացահայտ թշնամական ակտ էր՝ ուղղված Հայաստանի կենսական շահերի դեմ»: Իրավացիորեն շեշտելով, որ հայերը դաշնակիցներից պակաս շահագրգռված չեն քրդական պետության ստեղծմամբ, նա միաժամանակ նշում էր, որ Քուրդիստանը ստեղծվում էր «ոչ այնտեղ, որտեղ պետք է ստեղծվեր»<sup>56</sup>:

Հայաստանի պատմական աշխարհագրությանը քաջածանոթ Ն. Ադոնցը տեղին մատնացույց էր անում այն պարագան, որ Քուրդիստանը ընկած է ոչ թե Եփրատից, այլ Տիգրիսից արևելք և տարածվում է մինչև Զագրոսի լեռները և այնտեղից էլ՝ մինչև պարսկական Արդելյան նահանգը: Այս առթիվ նա ուշագրավ առաջարկություն էր անում, այն է՝ Խարբեբեդի, Ադանայի և Դիարբեքի սանջակները (30-36 հզ. կմ<sup>2</sup>) փոխանակել Տրապիզոնի արևմտյան և Հաքքյարիի հարավային մասերի (32 հզ. կմ<sup>2</sup>) հետ<sup>57</sup>:

Առաջին հայացքից թվում է, թե հայերն ավելի շատ հողային ծավալմամբ էին շահագրգռված: Սակայն այդ տեսակետը միանգամայն սխալ է: Հայերը պարզապես իրենց հայրենի հողերում պարփակվելու կարիք ունեին: Այսինքն՝ պատմաաշխարհագրական առումով ձգտում էին ամբողջացնել սեփական երկիրը, որի ռազմավարական կայունությունը կապահովվեր միայն այդ ժամանակ:

Փաստորեն՝ սևրյան հողվածների աշխարհագրական պատկերացումներով հայ-քրդական տարածքային առձակատումն ավելի սուր բնույթ ստացավ: Այդ պարագան ի հայտ էր եկել դեռևս Փարիզի վեհաժողովին ներկայացված հայկական և քրդական հուշագրերում: Այս առումով, ինչ-

55 Տե՛ս **Аралов С.**, Воспоминания советского дипломата, Москва, 1960, էջ 212.

56 **Ադոնց Ն.**, Հայկական հարց, Եր., 1996, էջ 122-123:

57 Նույն տեղում, էջ 126-127:

պես արդեն ցույց տրվեց, 1919 թ. կնքված հայ-քրդական համաձայնագիրը ոչ մի որոշակի լուծում չկարողացավ ապահովել տարածքային խաչաձևումների խնդրի կարգավորման ուղղությամբ: Դրա համար էլ տերությունները, որոնց առանձնապես չէր մտահոգում հայ-քրդական արդարացի սահմանագծումը, արհեստական լուծումներ գտան:

Հայ-քրդական տարածքային հակամարտությունը գերազանցապես պայմանավորված էր քրդերի անհիմն հողային պահանջներով, ինչը նրանք արդարացնում էին և «հիմնավորում» առձակատման թատերաբեմ հանդիսացող վայրերում քրդական տարրի գերակշռությամբ: Վերջին առումով քրդերի «ներդրումը» նշանակալից էր, քանզի նրանք ամենաակտիվ կերպով մասնակցել էին հայկական կոտորածներին:

**Տարածքային խաչաձևումների տեսանկյունից Սևրով որոշված նման Քուրդիստանը մեզ համար միանգամայն անընդունելի էր: Ի վերջո, քանի դեռ քրդերը հավակնում էին զուտ հայկական հողերին, խոսել հայ-քրդական տարածքային առձակատման կարգավորման մասին անօգուտ գործ էր:**

## Եզրակացություններ

1. 1919 թ. պետականությունից զուրկ քրդերը Շերիֆ փաշայի նման հեղ-հեղուկ գործչի գլխավորությամբ Փարիզի խորհրդածոդովին ներկայացրին իրենց պահանջները: Շերիֆին ոչ ոք պաշտոնապես չճանաչեց իբրև Քուրդիստանի պատվիրակ, ասենք՝ պատվիրակություն էլ, որպես այդպիսին, չկար: Այս փաստն ինքնին նշանակալից էր քրդական ցեղերի ընդհանուր տարանջատվածության համապատկերի վրա: Եվ իզուր չէ, որ քրդերի հուշագիրը ոչ միայն ըստ էության չգնահատվեց, այլև հետագայում մոռացության մատնվեց: Համաձայնագրի հանդեպ ավելի ուշադիր էին հայերը, քանզի այն շոշափում էր նրանց կենսական շահերը: Հայ քաղաքական շրջանակների մոտեցումները և վերաբերմունքը միատեսակ չէր: Հարցի բովանդակությունը հայ գործիչները դիտարկում էին իրենց քաղաքական և միջկուսակցական պայքարի տեսանկյունից:

2. Եթե հայ-քրդական համաձայնության նախորդ փորձերը մնացել են թղթի վրա և պարզապես լրացրել են նմանատիպ վավերագրերի շարանը, ապա արդի փուլում երկու կողմերն էլ պետք է ձգտեն, որքան հնարավոր է, գերծ մնալ երկուստեք անվստահությունից և հանուն ընդհանուր թշնամի Թուրքիայի դեմ համատեղ պայքարի հանգեն փոխադարձ հասկացողության ու համագործակցության: **Իսկ այդ ուղղությամբ առաջին քայլը պետք է անեն քրդերը:**

3. Արտաքնապես ձգտելով մերձեցման և գործակցության հայերի հետ՝ քրդերը, այնուամենայնիվ, լիովին չեն կարողանում ձերբազատվել այն նախապաշարումներից, որոնք հիմնավորապես իշխում են ոչ միայն ղեկավար տարրի, այլև ժողովրդական լայն զանգվածների մտածելակերպի և գործելակերպի մեջ: Չնայած միջազգային ասպարեզում հայկական և քրդական հարցերի համատեղ հանդես գալու պարագային, երկու հարևան ժողովուրդների հարաբերությունները դեռ շարունակում են կնճռոտված մնալ:

Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հայերի և քրդերի հողային պահանջները շատ դեպքերում համընկնում են, ինչը զգալիորեն խոչընդոտում է իրական համագործակցության հնարավորությանը:

4. Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների հետագա սրման և բարդացման պայմաններում քրդական հարցը ներկայումս ավելի է կարևորվում: Հենց այդ պարագան էլ տերությունները օգտագործում և շահարկում են իրենց նպատակների իրականացման համար: Հետաքրքրության գլխավոր պատճառները քրդաբնակ տարածքների աշխարհագրական դիրքն ու բնական հարուստ պաշարներն են:

5. Քրդական ազգային շարժման ներկա փուլում հայերը ևս պետք է սատար կանգնեն նրան, որովհետև այն ուղղված է Թուրքիայի դեմ: Այդ առթիվ տեղին է շեշտել, որ քրդերը նախ և առաջ պետք է միասնական ձևակառուվ հանդես գան և հստակեցնեն Հայկական հարցի հանդեպ (մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության ճանաչման առումով) իրենց մոտեցումները:

6. Հայկական և քրդական հարցերը պետք է դիտարկել միասնության մեջ, քանզի մեկի լուծումն առանց մյուսի որոշման կլինի թերի և ժամանակավոր: Դրանք փոխկապակցված են և պահանջում են ներդաշնակ կարգավորում: Հայ-քրդական ներկա անվստահությունը, որը գերազանցապես պայմանավորված է քրդերի անհիմն հողային պահանջներով, չպետք է հանգեցնի երկխոսության և ինչ-ինչ հարցերում փոխգործակցության բացառմանը:

7. Քրդերի դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության և հայկական իղձերի նկատմամբ լավագույն դեպքում չեզոք-բարյացակամ մակարդակից այն կողմ չի անցնում: Նրանք հասկանում են, որ սեփական պետականության բացակայության կողքին ՀՀ գոյությունը կարևոր գործոն է, ինչը դիտարկում են ժամանակավոր հակաթուրքական ձևակառու ձևավորելու տեսանկյունից: Սակայն իրենց առավելապաշտական նպատակների ամբողջական իրականացման տեսանկյունից ռազմաքաղաքական առումով հայկական գործոնի ուժեղացումը Թուրքիայի քրդերի համար ոչ միայն ձեռնտու չէ, այլև վտանգավոր է: Քրդերը անհանգստանում են, որ միջազգային և ներքին համապատասխան իրադրության պայմաններում հայկական կողմը կարող է նրանց դուրս մղել Արևմտյան Հայաստանի հողերից:

**8. Հաշվի առնելով անցյալի պատմության դասերը՝ պետք է փաստել, որ քրդերը ՀՀ-ի համար ընդհանուր առմամբ անբարեհույս և անվստահելի հարևաններ են: Ավելին, ամենևին էլ չպետք է բացառել Թուրքիա-Հայաստան ռազմական նոր առձակատման դեպքում թուրքերի կողմում քրդերի մասնակցության հավանականությունը:**

**Ավագ Ա. Հարությունյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցերը:

**ARMENIAN-KURDISH RELATIONS IN THE PERIOD  
OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

Avag A. Harutyunyan

**Keywords** – the Armenian Genocide, Sherif Pasha, the Ottoman Empire, the Kurdish organizations, the United Kingdom, the Armenian issue, the First Republic of Armenia, Paris Conference, K. Sasuni, Armenian-Kurdish agreement of 1919, Poghos Nubar, Hamo Ohandzhanyan, Avetis Aharonyan, the Treaty of Sevres.

After World War I, being deprived of statehood, the Kurds presented their requirements at the Paris peace conference, acting under the dictation of the Turkish authorities of Sherif Pasha. Nobody officially recognized Sherif as the representative of Kurdistan and his memorandum was simply rejected. Thus, it is because of Sherif that the Armenian-Kurdish agreement signed in November 1919 did not led to the actual results.

Armenian and Kurdish problems should be regarded in unity. Both are inter-related and require some balanced solution. The Armenian-Kurdish nowadays distrust is due to unreasonable territorial claims of Kurds.

The Kurds understand that in the absence of the existence of their own state, the existence of the Republic of Armenia is an important geopolitical factor. From the perspective of a full implementation of their maximalist objectives, the strengthening of the Armenian factor is not favorable to the Kurds in Turkey.

Taking into account the historical lessons of the past, it should be stated that the Kurds are untrustworthy neighbors for the Republic of Armenia. Moreover, the possibility of participation of the Kurds on the Turkish side during a military conflict between Armenia and Turkey should never be excluded.

Резюме

**АРМЯНО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД ПЕРВОЙ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Аваг А. Арутюнян

**Ключевые слова** – Геноцид армян, Шериф паша, Османская империя, курдские организации, Великобритания, Армянский вопрос, Первая Республика Армении, Парижская конференция, К. Сасуни, Армяно-Курдское соглашение 1919 года, Погос Нубар, Амо Оанджян, Аветис Ааронян, Севрский договор.

После Первой мировой войны, будучи лишёнными государственности, курды в лице действующего под диктовкой турецких властей Шерифа паши

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ը (ԺԳ) քաղք. թիվ 1 (53) հունվար-մարտ, 2016

ՀՀԿ հասկանալիության հանրելս

представили на Парижскую мирную конференцию свои требования. Шерифа никто официально не признал как представителя Курдистана и его меморандум был попросту отвергнут. Именно по вине Шерифа паши к реальному результату не привело заключенное в ноябре 1919 г. армяно-курдское соглашение.

Армяно-курдскую проблему надо рассматривать в единстве. Она взаимосвязана и требует гармоничного урегулирования. Современное армяно-курдское недоверие обусловлено непомерными территориальными претензиями курдов Турции, которые в начале 20-го века активно участвовали в осуществлении Геноцида армян, а впоследствии предъявили претензии на их земли.

Курды не имеющие собственной государственности, понимают, что существование Республика Армении является важным геополитическим фактором. С точки зрения полной реализации своих максималистских целей, усиление армянского фактора не выгодно курдам Турции.

Учитывая исторические уроки прошлого, надо констатировать, что для Республики Армения курды проживающие на территории Западной Армении неблагонадежные соседи. Более того, никоим образом не надо отрицать возможность участия курдов на стороне турок в случае нового военного конфликта между Арменией и Турцией.